



Հակոբ Պարոնյան

Քաղաքավարության վնասները

4

Բարի էք եկեր, Բարսեղ աղայ, ո՞ր հողմը փչեց զձեզ դէպի մեր գիւղը...

Պզտիկ այցելութիւն մունէի ընելու...

Ընելու է... ընելու է... երբեմն-երբեմն այցելութիւն ալ ընելու է... շատ աղէկ...
շատ աղէկ... այս գիշեր հո՞ս էք:

Ոչ, կտոր մը պանիր հաց կերայ հոս, պիտի դառնամ... որովհետեւ տունը մինակ
են...

Դառնալու է... դառնալու է... քանի որ տունը մինակ են... ես ալ ըլլամ նէ, կը
դառնամ:

Դուրս մնալու սովորութիւնը չունիմ:

Ունենալու չէ... ունենալու չէ... դուրս մնալու սովորութիւնը աղէկ սովորութիւն մը
չէ...

Այս խօսակցութիւնը, որ նոր սկսած էր Պոլսոյ թաղի մը նպարավաճառ-գինետան
մը մէջ, երեկոյեան ժամը տասնութեկին, ընդմիջուեցաւ երիտասարդէ մը, որ
գինետունը մտնելով՝ Բարսեղ աղային վագեց եւ անոր ձեռքը թօթուելով՝

Ի՛նչ բախտ, ի՛նչ բարեբախտություն, ի՛նչ երջանկություն, ըսաւ, այս իրիկուն գճեց
հոս գտնելը:

Բախտ է հապա, բարեբախտություն է հապա, երջանկություն է հապա, կրկնեց
Բարսեղ աղային առաջին խօսակիցն, որու անունն Գաբրիէլ էր կարծեմ:

Պգտիկ, սրկէ շիշ մ'օղի բեր մեզի, պոռաց նորեկը:

Յետոյ Բարսեղ աղային ծիծաղելով՝

Իրիկուն է, ըսաւ, քանի մը հատ կը խմուի:

Կը խմուի, կը խմուի, կրկնեց Գաբրիէլ աղան:

Ես օղի խմելու սովորություն չունիմ, պատասխանեց Բարսեղ աղան:

Մէկ երկու հատը չվնասեր:

Երկու հատը բան մը չըներ:

Գինետան սպասատրն բերաւ օղին եւ անոր վերաբերեալ աղանդերը:

Ասանկ հէ՞, Բարսեղ աղայ, կեցիր, ձեռքովս հատ մը հրամցնեմ ձեզի...

Հրամցնելու է եա՛, հրամցնելու է եա՛, Բարսեղ աղան մերն է:

Ես չեմ կրնար խմել, ներեցէք:

Շատ չպիտի խմենք...

Գիտեմ, բայց խմած չունիմ...

Մի՛ մերժէք, կ'աղաչեմ:

Չեմ կարող խմել:

Հատ մը... չես թունաւորուիր:

Մէկ հատը շթունաւորեր:

Չթունաւորեր, բայց վարժուած չեմ, խելքս կը դառնայ:

Միհրանիկ, մի՛ ստիպեր, խելքս կը դառնայ, կ'ըսէ կոր:

Այս օղին թեթեւ է:

Բարսեղ աղայ, հատ մը խմէ, այս օղին թեթեւ է, կ'ըսէ կոր:

Ուտըներդ պագնեմ, մի՛ ստիպէք:

Անանկ է նէ, մի՛ ստիպեր, Միհրանիկ. ուտըներդ պագնեմ, կ'ըսէ կոր:

Մէկ հատով ի՞նչ կ'ըլլայ, եղբայր:

Ան ալ շիտակ է, Բարսեղ աղայ, դուն ալ հատ մը խմէ, մէկ հատով մարդ չմեռնիր:

Կարող չեմ տանելու նոյնիսկ մէկ կաթիլը:

Միհրանիկ, ա՛լ կարճ կապէ, մէկ կաթիլն անգամ խմելու կարող չէ եղեր:

Մէկ գաւաթը ախորժակ կը բանայ, օգտակար է:

Եկուր, Բարսեղ աղայ, գաւաթ մը խմէ, ախորժակ կը բանայ:

Զկրցինք հասկցնել ձեզի... նեղութիւն կու գայ վրաս:

Միհրանիկ, ա՛լ կրկնելու չէ:

Ըսել է, որ մեր բարեկամութիւնը կեղծ է եղեր, Բարսեղ աղայ:

Այդ խօսքը չեմ ընդունիր:

Չընդունիր ա՛, Բարսեղ աղան անանկ մարդ չէ:

Վնաս չունի, գաւաթ մը օղիին համար այսչա՛փ դէմ դնել... շիտակը չէի յուսար... թող ասանկ ըլլայ... թոյն ըլլար նէ, քարեկամութեան սիրոյն համար մարդ կը խմէր:

Բարսեղ աղայ, գաւաթ մը խմեցէք, որ վերջանայ խնդիրը:

Բարսեղ աղան կը հարկադրուի խմելու եւ երեսը ծոմոտկելով՝

Ինտոր ալ կը խմեն, կ'ըսէ ինքն իրեն, կարծես սիրտս էրեց:

Ձուկէն չառնէի՞ք կտոր մը, Բարսեղ աղայ:

Կ'առնեն, պարոն Միհրան:

Երեք քարեկամները սկսան ազգային վարժարանաց վրայ խօսակցելու: Յայտնի է, թէ մեր մէջ մէկ կամ երկու գաւաթ օղի խմուելուն պէս՝ խօսակցութիւնն ազգային վարժարանաց վրայ կ'իյնայ: Չանոնք քարեկարգելու համար երեքն ալ մէյ-մէկ տարբեր ճամբայ ցոյց տուին: Երեքն ալ իրարու ճամբաները սխալ գտան, զիրար համոզելու աշխատեցան, չյաջողեցան, յուսահատեցան: Միհրան շիշն առաւ եւ սկսաւ գաւաթները լեցնել:

Ալ չեն խմեր, պոռաց Բարսեղ աղան, կ'ելլեն, կ'երթան:

Բան չմնաց շիշին մէջ. սա գաւաթներն ալ խմենք, երթանք, պատասխանեց Միհրան:

Բարսեղ աղայ, խնդիր մի՛ յարուցաներ, Աստուածդ սիրես, ամէն գիշեր կը խմենք կոր, սրտիկա, եւ, փառք տիրոջը, երկաթի պէս են, քեզմէ ալ քաջառողջ են... քանն ան է, որ մարդս տկար չստեղծուի... չէ նէ օղիէն մեռած մարդ չկայ:

Վարժուած չեն կ'ըսեն կոր, եղբայր:

Վարժուէ քիչ մը, ի՞նչ կ'ըլլայ:

Չէ, չէ, չէ, չեն կրնար խմել:

Մէկ հատ մ'ալ, լմնցաւ, գնաց:

Այս գաւաթն ալ կը խմեմ, ուրիշ չեմ խմեր:

Մի՛ խմեր:

Երեք բարեկամներն իրարու կենաց խմեցին:

Մեծապէս շնորհակալ եմ, Բարսեղ աղայ, որ խօսքս չկոտրեցիր, ըսաւ Միհրան՝
պատահաբաղով կտոր մը ձուկ երկնցնելով Բարսեղ աղային, որ օղին վար
իջեցնելու կ'աշխատէր:

Բարսեղ աղան սիրտ կոտորող մարդ չէ, աւելցուց Գաբրիէլ աղան:

Եւ շիշը ջուրի բաժակի գարնելով՝

Պզտիկ, լեցո՛ւր սա շիշը, պոռաց:

Ատ ի՞նչ է... մնաք բարով... ես կ'երթամ:

Կ'երթա՞ք, ըսաւ Գաբրիէլ աղան լուրջ դէմքով մը, շիտակը, սա չվայլեցուցի ձեզի,
Բարսեղ աղայ:

Ինչո՞ւ:

Ըսել է, թէ ես պարզապէս շողոքորթ մ'եմ հոս, որ ուրիշի ստակով օղի խմելու
եկած եմ. ես բնատրուօթիւն մ'ունիմ, որ ինձի մէկ խմցնողին չորս կը խմցնեմ:

Ես չխմցուցի:

Դուք հիւր էք եւ որովհետեւ մեր թաղը գտնուած էք, մեր պարտքն է ձեզ յարգել
մեր կարողութեան չափ: Կը խնդրեմ տեղերնիդ նստեցէք:

Գաբրիէլ աղան իրատունք ունի, ի՞նչ ըսեմ:

Մեր գիտցածն սա է, որ մարդ մը իր բարեկամաց թաղին մէջ գտնուի նէ, ինքզինքը իր բարեկամաց տրամադրութեան տակ կը դնէ:

Գիտեն... բայց...

Հրամանեցէք, ըսաւ Գաբրիէլ աղան, օղիի գաւաթն Բարսեղ աղային երկնցնելով:

Շնորհակալ եմ, պատասխանեց Բարսեղ աղան՝ ակամայ ընդունելով գաւաթն:

Յետոյ գաւաթներն պարպեցին իրարու կենաց:

Բարսեղ աղան որուն աչքերը կարմրիլ սկսած էին, հազիւ յաջողեցաւ ընկել երրորդ գաւաթը՝ հազար անգամ անիծելով այն այցելութիւնը, որու պատճառով հանդիպած էր այս փորձանքին:

Չես կարող խմել հա՞, ի՞նչ սատանան ես դուն, մեզմէ աղէկ կը խմես կոր եւ ինչո՞ւ չխմես, կնի՞կ ես, աղբա՛ր, թող որ կնիկները հիմա մեզմէ շատ կը խմեն կոր:

Ալ ըսելիք չունիմ, որովհետեւ չէք հաւտար կոր: Ժամը քանի՞ եղաւ արդեօք:

Հոգ մի՛ ըներ, քանի ըլլայ նէ, ըլլայ, ձի կայ, կառք կայ, թրամուէյ կայ:

Գիտենք արդէն, թէ մեր մէջ երբ երեք չորս օղի խմուի, խնդրոց կարգին երկրորդ խնդիրը կ'ըլլայ թաղականներու ընթացքը. ուստի երեք բարեկամները ձեռք առին սոյն խնդիրն, որուն վրայ եւս քառորդի մը չափ վիճաբանեցան առանց գիրար հասկնալու. անմե՛ղ վիճաբանութիւն: Միայն թէ Բարսեղ աղան, որուն, ինչպէս կ'ըսեն, գլուխը ցատկած էր օղին, կիրքով կը խօսէր: Երբ կարգը չորրորդ բաժակին եկաւ, Բարսեղ աղան, որու գլուխը դառնալ սկսած էր, բնաւ ընդդիմութիւն չըրաւ, հաճութեամբ խմեց եւ սկսաւ ցած ձայնով սֆահանհ վրայ հին պեսթէ մ'ալ երգել:

Կը լսե՞ս կոր, պարոն Միհրան, ինչ աղուոր կ'երգէ կոր Բարսեղ աղան:

Սքանչելի՛:

Բարսեղ աղայէն չէի յուսար ասանկ հրապուրիչ ձայն մը:

Ես ալ չէի կարծեր, որ Բարսեղ աղան այսքան աղուոր ձայն մ'ունենար:

Բարսեղ աղային հաճոյ թուեցան բարեկամներուն այս խօսքերը. ծիծաղեցաւ, Միհրանիկը շոյեց ու Գաբրիէլ աղային ուսին գարկաւ: Յետոյ վրան երկար դրուած զգայութեան ձայնարկութիւն մ'արձակեց եւ սպասաւորը կանչեց, որ շիշը լցնէ:

Շատ կ'ըլլայ, Բարսեղ աղայ, ըսին բարեկամները:

Ես չհրամցնե՞մ:

Շատ լաւ, կ'ընդունինք:

Անանկ ալ եղաւ, անանկ ալ. շիշ մ'ալ կը խմենք, կ'երթանք, ուշ մնացի:

Երթալու համար դեռ կանուխ է, ձի կայ, կառք կայ, թրամուէյ կայ, ըսաւ Միհրան:

Այո՛, այո՛, ձի կայ, կառք կայ, թրամուէյ կայ, կրկնեց Գաբրիէլ աղան:

Երրորդ շիշն ալ խմեցին: Օղիի շոգին գուարթացուցած էր Բարսեղ աղան. մինչեւ ականջները կաս-կարմիր կտրած՝ շարունակ կը խնդար եւ կը խօսէր: Նստած տեղն երկու կողմ կ'երեւար, հաւասարակշռութիւնը կորուսած էր, սակայն խելքը գլուխն էր, եւ կ'աշխատէր այնպէս ցոյց տալ, թէ որպէս թէ ինքն իր կամօքն կ'երեւար:

Միսաք աղայէն, ըսաւ սպասաւորն՝ շիշ մ'օղի դնելով ասոնց սեղանին վրայ:

Քովերնիս եկուր, Միսաք աղայ, պոռաց Բարսեղ աղան:

Միսաք աղան իր օղիի շիշն ու գաւաթը հետն առնելով եկաւ:

Միսաք աղայ, սա իրիկուն ալ ասանկ եղաւ, մեր բարեկամները մեզի օղի խմցուցին:

Շատ աղէկ ըրին, աշխարհս ունայն աշխարհ մ'է, բարեկամներու հետ խնդալու, գուարճանալու է:

Խմենք ուրեմն:

Չորրորդ շիշն ալ պարպեցին: Այնուհետեւ հատ մ'ալ ինէ, չէք մերժեր ա' ըսելով, չորսն ալ վերստին մէյմէկ շիշ բերել տուին եւ բաւական տաքցուցին իրենց գլուխները: Հինգերորդ շիշէն յետոյ Բարսեղ աղան հեծկլտալով կը զբաղէր: Վեցերորդին՝ ալ չկրնալով նստիլ՝ ընկողմանած էր: Եօթերորդ եւ ութերորդ շիշերուն ձեռնպահ մնաց: Ժամը գիշերուան երկուքին կը մօտենար: Միհրան սպասաւորը կանչեց, խմուած օղին հաշիւը հարցուց: Գաբրիէլ աղան խնդրեց, որ կէտուակէս վճարուէր: Միհրան մերժեց եւ հաշիւը մաքրեց:

Բարսեղ աղան ի՞նչ ընենք, ըսաւ Գաբրիէլ աղան, տունը հիւանդ չունենայի, տունս կը տանէի: Տունս մօտ ալ է, դիւրութեամբ կ'ըլլար:

Գիտէք, որ ասանկ բաներէն չեմ փախչիր ես, յայտնեց Միհրան, բայց ի՞նչ ընեմ, որ պատկեցնելու սենեակ չունիմ:

Շիտակը՝ ես կ'առնէի, տունս կը տանէի, յարեց Միսաք, եթէ այսօր տախտակ շփած ու յոգնած չըլլային տունը:

Բարեկամ մը տուն տանելը բա՞ն մ'է, բայց եկուր, տես, որ հիւանդ ունիմ տունը:

Ձախտրդութիւն... ի՞նչ կ'ըլլար, թէ որ սենեակ մ'աւելի ունենայի:

Մերիններն ալ այսօր ելեր են տախտակ շփելու:

Սենեակ մ'ալ աւելի ունենայի նէ:

Չէ՞ք կրնար մէկտեղ պատկիլ:

Կարելի՞ է. դուք կրնաք տանիլ. տախտակները շփուած են եղեր, ի՞նչ վնաս ունի:

Իրաւունք ունի Միհրան:

Դուք տարեք, աղբար, հիւանդին ի՞նչ չարիք կրնայ հասցնել խեղճը, ձեր տունը մօտիկ այ է, հոս է:

Փափուկ կէտ մը կայ հոն... ամէն բան չըսուիր:

Մնաք բարով, ըսաւ Միսաք ու մեկնեցաւ:

Գիշեր բարի, Գաբրիէլ աղայ...

Երթաք բարով:

Գաբրիէլ աղան գինեպանին յանձնարարեց Բարսեղ աղան եւ աղաչեց, որ պատկելու համար տեղ մը պատրաստէ անոր: Գինեպանը խօսք տուաւ, թէ հարկ եղած խնամքը կը տարուի իւր հիւրին:

Երբ պարպուեցաւ գինետունը, գինեպանն Բարսեղ աղային քովը գնաց, որպէսզի ձայն տայ անոր եւ վերի յարկը տանի պատկեցնելու. իսկ երբ գարշելի հոտ մ'առաւ եւ երբ տեսաւ, թէ Բարսեղ աղային դէմքը թաթխուած էր դեղին բաղադրութեամբ մը, որուն մէջ կը տեսնուին վարունգի, ձուկի կտորներ, ծամուած լուբիայի խմորներ քարստնով շաղախուած, ետ ետ գնաց գանելով, սպասատրը կանչեց:

Բռնէ սրտը ոտքերէն, հրամայեց:

Սպասատրը վեր առաւ Բարսեղ աղային ոտքերը:

Ինքն ալ ձեռներէն բռնեց եւ մէկէն ի մէկ թողուց պոռալով՝

Գարշելի մարդ:

Բարսեղ աղային թեւերն ու ձեռներն ալ ծեփուած էին այդ գարշահոտ բաղադրութեամբ:

Սպասատրն հրամանի կը սպասէր՝ բարձրացուցած Բարսեղ աղային ոտքերը:

Գինեպանը քիթը բամբակով թխմելով եւ ձեռքերը ջնջոցով փաթթելով Բարսեղ աղային ձեռներէն բռնեց: Վերուցին Բարսեղ աղան եւ գինետունէն դուրս ելնելով փողոցի մ'անկիւնը ձգեցին: Մէկուկէս ժամի չափ խորդաց Բարսեղ աղան եւ յետոյ ինքզինքը կանգուն գտաւ պատի կոթնած եւ դէմը մարդ մը, որ ձեռքովն գինքը բռնած կը հարցնէր.

Ո՞րո՞ւ հետ էիր...

Անոր հետ:

Ան ո՞վ է:

Ան...

Անո՞նք:

Ձայն չկայ: Բարսեղ աղան չէր կրնար աչքերը բանալ, ոտքի վրայ կը քնանար, գլուխը կտործքին վրայ:

Գիշերապահը մեծ դժուարութեամբ յաջողեցաւ Բարսեղ աղային բերնէն յափշտակել Գաբրիէլ անունը:

Գիտեմ, գիտեմ, ըսաւ գիշերապահը:

Յետոյ.

Քալէ նային հետս:

Անշուշտ դիւրին չէր Բարսեղ աղան այդ վիճակին մէջ Գաբրիէլ աղային տունը տանել, բայց գիշերապահն յանձնատու եղաւ, ի սէր մարդկութեան, ամէն դժուարութեանց եւ յաջողեցաւ Բագոսի այս տկար աշակերտը յանձնել Գաբրիէլ աղային, որ ապշած՝ ստիպուեցաւ ընդունիլ այս հիւրն եւ իր սենեակը տանել ու պառկեցնել: Քանի մը ժամ յետոյ Բարսեղ աղան արթնցաւ: Ծարաւի էր: Հասկցաւ, թէ իր տունը չէր: Կանգնեցաւ, խարխափելով գտաւ սեղանը. լեցուն բաժակ մը ձեռքն անցաւ, խմեց զայն ի մի ումպ, երեսը քիչ մը թթուեցուց եւ

պատկեցաւ վերստին: Առաւօտուն կանուխ արթնցաւ: Չհանուած պատկած էր: Տեսաւ, որ բարձն, որու վրայ դրած էր գլուխն, ու վերմակի վերին կողմը դեղնած էին: Թիկնոցին թեւերուն, բաճկոնակին նայեցաւ, կարմրեցաւ: Ընչացքը շտկել ուզեց, ձեռները օտար նիւթերու դպան: Ձեռները գլխուն զարկաւ: Չհամարձակեցաւ արթնցնել Գաբրիէլ աղան. վար իջաւ եւ դռնէն դուրս ելաւ յարմար եւ առանձին տեղ մը գտնելու եւ լուացուելու համար:

Միհրան եւ Միսաք՝ նոյնպէս կանուխ արթնցած գինետուն գնացած էին Բարսեղ աղային վրայ տեղեկութիւն առնելու համար: Գինեպանը յայտնած էր անոնց, թէ շատ խնամք տարած էր իրենց հիւրին, թէ մաքուր անկողնոյ մը մէջ հանգիստ պատկած էր Բարսեղ աղան, թէ առաւօտուն ելած, մեկնած էր՝ շնորհակալութիւններ յայտնելով իրեն այն բարի ծառայութեանց համար, զորս մատուցած էր իրեն: Գինեպանը չէր մոռցած նաեւ յաւելուլ թէ ինքն, իբրեւ գինեպան, պարտաւոր էր իր յաճախորդներն ամէն կերպով գոհացնել, թէ ոեւէ պատիւ չպիտի զլանար Բարսեղ աղային, եթէ յանձնարարուած իսկ չըլլար: Միհրան եւ Միսաք շնորհակալութիւն յայտնելով մեկնած էին գինետունէն եւ փողոց մը դարձած էին, երբ տեսան Բարսեղ աղան, որ աղբիւրի մը առջեւ կեցած՝ թաշկինակով երեսը կը սրբէր:

Բարի լոյս, Բարսեղ աղայ, գիշերը ի՞նչպէս անցուցիր:

Շատ հանգիստ, շնորհակալ եմ, պարոն Միհրան:

Ես քեզի թող չէի տար երէկ գիշեր, բայց շատ պնդեցիր, գալ չուզեցիր նէ, ես ալ ձգեցի:

Շնորհակալ եմ, Միսաք աղայ: Կ'երեւի, որ Գաբրիէլ աղան թող չէ տուած գիւ:

Ի՞նչ...

Երէկ գիշեր ո՞ր մնացիր:

Առտուն ինքզինքս Գաբրիէլ աղային տունը գտայ... շատ զէշ արուած եմ եղեր. Գաբրիէլ աղայի տունն ինտոր երթալս չեմ գիտեր կոր... վրաս գլուխս ալ աղտոտած եմ:

Ստամոքսի արուեստ:

Այո՛:

Գաբրիել աղան կու գայ կոր:

Իրաւ որ մարդու երեսը նայելու կ'ամչնամ կոր, վերմակը, սաւանը, բարձը լուացուելու են այսօր:

Բարեւ ձեզ:

Աստծու բարին, Գաբրիել աղայ:

Ներեցէք Գաբրիել աղայ, շեմ գիտեր, ի՞նչպէս ներումն խնդրել:

Ներման բան չկայ, միայն թէ անձիդ վնաս մը չգայ. մեզի համար բան չկայ. շեւ կրնար վերցնել նէ, մի խմեր, եղբայր, մեղք չե՞ս:

Անանկ չէ՞, Միհրան աղայ:

Անանկ է:

Էշը, կ'ըսեն, չկերած խոտն ուտէ նէ, գլխու ցաւ կ'ունենայ, ըսաւ խնդալով Միսաք աղան:

Յետոյ ներումն խնդրեց, թէ իւր կամքէն անկախ պարագաներով բերնէն փախուցած էր այդ նմանութիւնը:

Մենք օղին քուկին կոկորդոդ ի վար շթափեցինք ա՛. «շեմ կրնար խմել», կ'ըսես, կը լմննաս:

Բռնի ո՞վ կրնար խմցնել քեզի:

Իրաւունք ունիք:

Ես, ըսաւ Միհրան, մէկու մը վրայ շեմ իյնար, որ խմէ:

Ես այ այն բնատրոթիւնն ունիմ:

Քու աղէկութեանդ համար կ'ըսենք կոր մենք:

Անանկ է եա՛, կ'ուզես նէ, տակառ մը օղի խմէ:

Դուք չէ՞իք, որ ստիպեցիք զիս խմելու:

Մենք ի՞նչ գիտնանք, որ դու վարժուած չես:

Մատուրնիս չպիտի հոտուրտայինք ա՛:

Աս բան մը չէ, անգամ մը կը գինովնայ մարդ, ուրիշ անգամ կը զգուշանայ.
ցաւալի կէտն այն է, որ...

Բարձր, վերմակը, սաւանը աղտոտեցի...

Ան այ բան մը չէ, կը լուացուին, կը սրբուին. հօրս հետ, որ հիւանդ է, քեզի համար
կոխի ընելու ստիպուեցայ:

Հայրդ իմացե՞ր է, որ...

Իմացեր է հապա՞... դուն գիշերն ելիր ու խմէ խեղճ մարդուն... մէզը:

Մէ՞զը մի...

Բարսեղ աղան կը թքնէ:

Մէզը հապա... թքնելու բան չկայ, ինչ եղաւ նէ, մ ե գի եղաւ. բժիշկները պիտի
քննէին այսօր այդ մէզը. երեք օր է, որ խնամքով կը պահէի սենեակիս մէջ
սեղանիս վրայ՝ այս առտու բժիշկներուն ցոյց տալու համար: Այնչափ
բարկանայ... այնչափ բարկանայ, որ... իմ գիտցածս՝ մարդ մը օղի չկրնար
տանիլ նէ, խմելու չէ. քո անձիդ այ կը վնասես, եղբայր:

Բարսեղ աղան կը շարունակէ թքնել:

Իրաւունք ունի Գաբրիէլ աղան:

Չէ նէ եկուր տունս պառկէ, շաբաթներով կեցիր, գլխուս վրայ տեղ ունիս:

Միշտ կը թքնէ Բարսեղ աղան:

Իմս ալ գլխուն վրայ:

Ինչ որ է, եղածը եղած է, քալենք, հո՞ս պիտի կենանք:

Թքնելէ չդադրիր Բարսեղ աղան:

Մինչեւ շուկան մէկտեղ գնացին չորս բարեկամները, յետոյ իրարմէ բաժնուեցան:

Թի՛ւ, թի՛ւ, անկիրթ մարդիկ, պոռաց Բարսեղ աղան, երբ առանձին մնաց. բռնի օղի խնցուցին, ստամոքսս արեցին, մէզ խմելու պատճառ տուին եւ հիմա, փոխանակ ինձմէ ներումն խնդրելու՝ խրատ կու տան, որ մէյ մ՛ալ օղի չխմեն: Այդ գարշելի մէզը խմելս հապա... ով գիտէ, ինչ բաներ կային մէջը... թիւու... միայն մէզը կը ցաւին կոր, որպէս թէ հորը հաղարջի օշարակը խմած ըլլամ... թող նորէն միգէ, Էֆենտին, սա ալ դժուար բա՞ն մէ... Ի՞նչ երես... չըսեր կոր, որ «այս ի՞նչ պզտիկութիւն եղաւ, խեղճ մարդուն մէզ խմելուն պատճառ եղանք, սա ի՞նչ ամօթ բան եղաւ...» ամենեւին, հորս մէզը կ'ըսէ, կ'երթայ. այսչափ անկրթութիւն չէի կրնար երեւակայել: Թող հորը մէզը յախճապակեայ ամանի մը մէջ լեցնէր ու վարդի փունջեր ալ դնէր այդ ամանին մէջ եւ ընդունելութեան սրահը մեծ հայելիին առջեւ դնէր. անպիտան...

Եւ թքնելով շարունակեց ճամբան:

Մելքոն աղան, խոնջած ցերեկուան աշխատութիւններէն, կարողութիւն չունի հետիոտն երթալ տունը, Սամաթիա, ուստի կ'որոշէ թրամուէով երթալ եւ ինքզինքը կը նետէ թրամուէի կառքին մէջ, ուր մէկ մարդու համար տեղ մնացած էր միայն: Հագի կը նստի Մելքոն աղան, եւ ահա միջին հասակով, գիրուկ անձ մը կը մտնէ կառքն եւ Մելքոն աղան տեսնելով՝

Շատ ուրախ եմ, կ'ըսեմ, ձեզի հոս տեսնելուս համար:

Ես ալ նոյնպէս, կը պատասխանէ Մելքոն աղան:

Ձեզի խօսելիք ունիմ. բայց նախ եւ առաջ կրնա՞ք արդեօք ինձի ալ ձեր քովն առնել, սանկ քիչ մը իլիշմիշ ըլլամ, սանկ պզտիկ տեղ մը բանաք նէ, բաւական է ինձի համար, ես կրնամ սղմիլ, արդէն պզտիկ մարդ մ'եմ:

Մելքոն աղան իր բարեկամին տեղ շինելու համար ասդին կը դառնայ, անդին կը դառնայ, աջ ծունկը ձախին վրայ կը դնէ, պզտիկնալու կը ջանայ: Մելքոն աղային այս ճգանց միջոցին բարեկամն`

Ահ, ինքզինքդ ինձի համար անհանգիստ մի՛ ըներ, ես կրնամ հոս սղմիլ, կ'ըսեմ ու, որպէս թէ տեղ գտած է, Մելքոն աղային ծունկին վրայ կը նստի:

Անհանգիստ չըլլաք...

Ամենեւին, ամենեւին, դուք ձեր հանգիստը նայեցէք, կարծեմ թէ ձեզի քիչ մը անհանգիստ ըրի:

Ոչ:

Ձմեռ է հիմա, սրիս նստինք նէ, կը տաքնանք:

Այո՛:

Եթէ պէտքդ իր եղաք, կ'աղաչեմ, ըսէ՛ք:

Ոչ, կը պատասխանէ Մելքոն աղան, որ հագի կրնայ շունչ առնել:

Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ, նայինք, Մելքոն աղայ:

Ոչինչ:

Տունը ի՞նչպէս եմ, չոճուխները աղէ՞կ եմ:

Խաթրրդ կը հարցունեն:

Ողջ ըլլան:

Մելքոն աղային ծունկերը կը սկսին թմրիլ. քրտինքը ճակտէն կը վազէ, ի՞նչ ընէ, քաղաքավարութիւնը կը պահանջէ, որ մեր բարեկամները չվշտացնենք ոչինչ քաներու համար:

Վայ կիտի Մելքոն աղայ, վայ, ասանկ հէլ՛... զիրար պիտի տեսնենք եղեր թրամուէի մէջ, աղբար, րահաթ չնստի՞ս, սանկ ոտքերդ չերկնցնե՞ս...

Մելքոն աղան չպատասխաներ, ոտքի կ'ելնէ եւ իւր տեղն բարեկամին կը յանձնէ:

Ի՞նչ, անհանգի՞ստ եղար:

Չէ, այսօր շատ նստեցայ տէ, ասոր համար ոտքի վրայ կայնիլ կ'ուզեմ քիչ մը:

Ատ ուրիշ, ես կարծեցի, որ պէոյոդիւր եղար: Էյ, Մելքոն աղայ, սա թրախոման մեր ազգին տունը կը քանդէ կոր, ի՞նչ պիտի ըլլայ ասոր վերջը, քանի կը մտմտամ կոր նէ, խելքս կը թոցունեմ կոր:

Իրաւունք ունիք:

Բայց այս խնդիրը խիստ կարեւոր բան մ'է, ատանկ երեսի վրայ ձգուելու խնդիրներէն չէ:

Եւ Մելքոն աղային թելը կը քաշէ ուժով, որպէսզի անոր զգացնէ խնդրոյն կարեւորութիւնը:

Այնպէս է, կը պատասխանէ Մելքոն աղան:

Եղբայր, մեր ազգին մէջ այս բանին կարեւորութիւն տուող չկայ, կը յարէ բարեկամն՝ ոտքերովն Մելքոն աղային ոտքերուն զարնելով:

Կը հասկնամ կոր, աղբա՛ր, կը հասկնամ կոր:

Այնպէս որ թրախոնայ տալու կարողութիւն չունեցող խեղճ աղջիկները տունը մնալու կը ստիպուին կոր... աս ի՞նչ սարսափելի բան է, աղբար, չպատասխանե՞ս...

Ի՞նչ պատասխանեմ...

Մահու եւ կենաց խնդիր մ'է այս:

Բարեկամն ամէն խօսելուն կամ ձեռքովը Մելքոն աղային կուրծքին կը գարնէ, կամ ոտքովը անոր ոտքերուն վրայ կը կոխէ, կամ անդին կը հրէ, կամ ասդին կը քաշէ: Եւ խօսք հասկցնելու այս եղանակն հագուադէպ չէ մեր ազգին մէջ: Տեսակ մը պերճախօսութիւն, որ ունկնդիրները ծեծելու վրայ կը կայանայ:

Իրատունք ունիս, ճանր՛մ, բայց ես ի՞նչ ընեմ: Ըսածդ կը հասկնամ կոր:

Կը հասկնաս կոր, բայց անտարբեր կը կենաս կոր, պապամ, կ'ըսէ Գասպար աղան եւ Մելքոն աղային թեւն ուժով կը սխմէ:

Կտոքին մէջ գտնուողներն կը խնդան այս տեսարանի վրայ, բայց մեր բարեկամն չհասկնար եւ կը շարունակէ ծեծել Մելքոն աղան, որուն համբերութիւնը կը հատնի եւ կտոքը Չեմպերլի-Թաշ հասնելուն պէս ինքզինքը կտոքէն դուրս կը նետէ:

Ի՞նչ ընէր Մելքոն աղան. կրնա՞ր ըսել բարեկամին, որ ըրածն քաղաքավարութեան դէմ էր, անկրթութիւն էր: Ոչ: Քաղաքավարութիւնը բացարձակ կերպով կը դատապարտէ անկիրթ ըսելը, ուստի Մելքոն աղան անկիրթ երեւալէն լաւ համարեց ծեծ ուտելը:

Այս տողերը գրողն ալ օր մը այս տեսակ երկու պերճախօսներու մէջտեղը գտնուեցաւ դժբախտաբար, եւ մագ մնաց, որ ոսկորներն շարդուբուրդ ըլլային, եթէ գթասիրտ մէկն վարպետութեամբ չազատէր գայն:

Բայց այս պերճախօսներէն աւելի սարսափելիները կան:

Պատմենք:

Մեղրաք աղան կօշկակարի մը խանութը կը մտնէ:

Բարեկամ, կ'ըսէ կօշկակարին, գոյգ մը կօշիկ կ'ուզեմ ապասպրել:

Շատ աղէկ:

Կօշիկներուն քիթը նեղ ըլլալու չեն:

Հիմակուան մոտայէն չէք ուզեր ըսել է:

Միայն կ'ուզեմ, որ ոտքս կօշիկի մէջ կարենայ շարժիլ. նեղ ոտքի աման չեմ ուզեր, որովհետեւ նասըր ունիմ:

Գլխուս վրայ, ձեզի անանկ կօշիկ մը շինեն, որ թէ մոտայի համաձայն ըլլայ, եւ թէ ձեր ոտքերը չսխմեն:

Եթէ կարենաս գոհ ընել զիս, միշտ քու խանութը կու գամ:

Վստահ եղէք:

Կօշկակարը Մեղրաք աղային ոտքի չափը կ'առնէ եւ կ'իմացնէ, թէ քանի մ'օրէն պատրաստ պիտի ըլլան կօշիկները:

Մեղրաք աղան քանի մ'օրէն կ'երթայ կօշկակարին:

Պատրաստ են կօշիկներս:

Այո՛, պատրաստ են:

Կօշկակարին աշակերտը Մեղրաք աղային կը ներկայացնէ կօշիկները:

Եղբայր, կ'ըսէ Մեղրաք աղան, ասոնք պզտիկ են:

Ընդհակառակն, մեծ են:

Ասոնց քիթերը նեղ են:

Չեմ կարծեր, շատ լայն քիթերն այսօր մաքսայուլ չեն. կ'աղաչեմ, անգամ մը ձեր ոտքն անցունէիք սա կօշիկները:

Մեղրաք աղան կը նստի: Կօշկակարին աշակերտը քառակուսի տախտակ մը կը դնէ Մեղրաք աղային ոտքերուն տակը: Մեղրաք աղան կը ձեռնարկէ նոր կօշիկներն հագնելու: Կօշիկները կ'ապստամբին:

Ոտքդ ուժով կոխէ՛, կը պոռայ կօշկակարն:

Ոտքի վրայ ել ու այնպէս կոխէ, կ'ըսէ կօշկակարին քալֆան:

Ուժով ոտքդ գետինը գարկ, կը խրատէ կօշկակարին աշակերտը:

Ծօ՛, սա փոշիէն ցանէ քիչ մը կօշիկներուն մէջ, որ Մեղրաք աղային ոտքերը դիրուքեամբ սահին ու մտնեն, կը հրամայէ կօշկակարն պզտիկ աշակերտին:

Հրամանը կը կատարուի:

Կօշիկներն հաստատամիտ են:

Էո՛ֆ, քրտնեցայ, պէ ատա՛մ, կ'ըսէ Մեղրաք աղան՝ երեսը թթուեցնելով, քեզի քառասուն անգամ ապսպրեցինք, որ մեծ ըլլան, լայն ըլլան, երկար ըլլան:

Կ'երեւայ, որ ոտքերդ ալ քրտնած են եւ անոր համար...

Չէ, քուզո՛ւմ, չէ, ճա՛նքմ... կօշիկները նեղ են:

Անգամ մը հագնիս նէ, կը բացուին: Լայն ոտքի ամաններն աւելի կը վնասեն նասրըներուն:

Չեմ կրնար կոր հագնիլ:

Կօշկակարն քալֆայովն եւ աշակերտներովն Մեղրաք աղային օգնելու կ'երթայ: Երկու հոգի Մեղրաք աղային թելը կը մտնեն. կօշկակարը Մեղրաք աղային մէկ

նորը կը բռնէ եւ կ'աշխատի կօշիկին մէջ դնել: Ամբողջ կօշկակարեան խումբը կը քաջալերէ Սեդրաք աղան.

Հա', հա', կը մտնայ կոր...

Քիչ մ'ալ համբերութիւն...

Քիչ մ'ալ հաստատամտութիւն...

Օ'ն, քաջալերուէ...

Վա'յ, վա'յ, վա'յ...

Քիչ մը դիմացիր, էֆենտիւն...

Անգամ մը մտնայ նէ...

Ոտքս կոտրէին նէ, աւելի աղէկ էր...

Հա', հա', քիչ մնաց...

Քիչ մ'ալ ճահտ ընես նէ, կը լմննայ, կ'երթայ:

Յոգնեցար նէ, քիչ մը յոգնութիւն առ տէ...

Չեմ ուզեր, պէ ստա'մ, թող տուէք հանեմ ոտքս, ճիշերս սզլամըշ կ'ըլլայ կոր...

Բան մը չէ, կ'անցնի:

Հարիւր անգամ ալ ապսպրեցի, որ ես մոտայ չեմ ուզեր, ոտքերուս հանգստութիւնը կ'ուզեմ...

Կոխէ ոտքդ...

Ի՞նչպէս կոխեմ, ճանըմ, չէք հասկնար կոր, որ ոտքերս կ'երին կոր, կարծես թէ կրակի մէջ կոխած եմ... թող տուէք, Աստուածնիդ սիրէք, սա ի՞նչ խօսք չհասկցող մարդոց հանդիպեցանք:

Քիչ մ'ալ դայրեթ ըրէ՛, Էֆենտի:

Ղայրեթնիդ ալ գետնին տակը անցնի, կօշիկնիդ ալ... թող տուէք ոտքս, վագ անցայ:

Բարկանալու իրաւունք չունիք, Սեդրաք աղայ...

Չունիմ, աղբար, չունիմ, դուք իրաւունք ունիք բարկանալու, թող տուէք, սա ոտքս քաշեմ:

Կօշկակարն ուժով բռնած է Սեդրաք աղային ոտքէն, որուն ինը տասներորդ մասը մտած է կօշիկի մէջ:

Շատ բժախնդիր էք, Սեդրաք աղայ:

Սեդրաք աղան կը զգայ, թէ գերի բռնուած է, ուստի անձնատուր կ'ըլլայ կօշկակարին, որ իւր խումբովը կը յաջողի կօշիկներն անցնել իւր յաճախորդին ոտքերուն:

Տեսա՞ր, ինչպէս աղէկ եղաւ... ոտքի վրայ կայնէ քիչ մը. ո՛հ... մինչեւ տուն երթաս նէ, ոչ ցաւ մը կը մնայ, ոչ բան մը... սանկ քալէ՛, նայիմ:

Ի՞նչպէս քալեմ, ճա՛նըմ, նասըրներս կը ցաւին կոր... հանեցէք սրտնք:

Քիչ մը խօսք մտիկ ըրէ, Սեդրաք աղայ, մինչեւ տուն գնայ, ոտքերդ պիտի վարժուին ու...

Քիչ մը լայնկեկ շինէիք նէ, չէ՞ր ըլլար:

Չըլլար, Սեդրաք աղաս, չըլլար, ամէն խանութ նամուս ունի, մենք մեր խանութին պատիւը չենք կրնար կոտրել անանկ մեծ, լայն ու տձեւ կօշիկներ կարելով. ամէն մարդ իր գործը գիտէ:

Աղէկ, աղէկ, ի՞նչ պիտի տանք:

Ոսկի մը ու մեճիտիէ մը:

Առե՛ք:

Շնորհակալ եմ: Մեզի մի՛ մոռնաք, Մեդրաք աղայ:

Մեդրաք աղան այդ կօշիկներով դուրս կ'ելնէ կօշկակարին խանութէն, նասարներու ցաւէն ամէն քայլափոխին հատաչելով, երբեմն ալ արտասուելով: Կը զգայ վերջապէս, թէ չափտի կրնայ շարունակել ճամբան, զքօսարան մը կը մտնէ, բազմոցի վրայ կը նստի եւ կօշիկները հանել կ'ուզէ: Չյաջողիր: Սրճարանին սպասատրը կը կանչէ եւ կ'աղաչէ, որ կօշիկներն քաշէ: Սպասատրը բոլոր ուժը կը սպառէ, կարելի չէ կօշիկները հանել: Իմաց կը տրուի կօշկակարին, որ քալֆային ընկերակցութեամբ կը հասնի ու մեծ դժուարութեամբ կը յաջողի ազատել Մեդրաք աղան իր ոտքերուն ձեռքէն: Մեդրաք աղան կը հագնի հին կօշիկները, գորս կօշկակարի խանութէն հետն առած էր, եւ կը հանգստանայ:

Բնաւ սրխրի չէք գար կոր, Մեդրաք աղայ, կ'ըսէ կօշկակարը, ձեւաւոր եւ ճաշակաւոր բան մը հագնելու համար քիչ մը ակռան սխմելու է մարդս. ինչ որ է, տուէք սա կօշիկներն ինձի, վաղը ես զանոնք աղուոր խալըպի մը զարնեմ տէ, դրկեմ ձեզի:

Շատ աղէկ, կը պատասխանէ Մեդրաք աղան ու խահուէ մը խմելուն պէս կը մեկնի:

Հետեւեալ օրը Մեդրաք աղան շուկայ կ'երթայ, ապայէ լաբճին մը ու լաստիկ մը կը գնէ, կը հագնի ու գործին կ'երթայ:

Դիտողութիւնները կը սկսին.

Սա Մեդրաք աղան շատ թոհաֆ մարդ է:

Ապտալ է պարզապէս:

Տիւանէ ըսէք սրտը, երթայ:

Ես ալ տեսայ, ապա լաբճին մը անցուցեր է ոտքը, վրան ալ լաստիկ հագեր է...

Խայտառակութիւն է:

Ինչ մեղքս պահեմ, հետը պտտելու կ'ամչնամ կոր:

Թող գիտ ճիւղ երթայ, նստի, էֆենտիմ:

Ատ ոտքերով ընկերութեանց մէջ մտնել կարելի չէ:

Այս դիտողութիւններն Սեդրաք աղային ականջը կը հասնի: Սեդրաք աղան կը համոզուի, թէ քաղաքավարութիւնը չհակառակիր նասրի, բայց սարսափելի թշնամի է ապա լաբճինի: Սեդրաք աղան կը ստիպուի հանել լաբճիները եւ ընդունել մոտային համաձայն կօշիկներն ու անոր հարուածներն:

Ծնունդի կամ Չատկի առթիւ բարեկամաց եւ ազգականաց այցելութիւններ կ'ընդունիք:

Շատ անգամ կը պատահի, որ երեք կամ աւելի անձանց այցելութիւններն միանգամայն ընդունիք:

Սովորութիւն ունիք ասոնց խահուէ կամ անուշ կամ օշարակ կամ օղի հրամցնել:

Տանն աղջիկն ափսէ ի ձեռին կը մտնէ սենեակը:

Որո՞ւ հրամցնէ նախ եւ առաջ:

Բնականաբար ամէնէն տարիքոտին:

(Բնականաբար ամէնէն հարուստին):

Աղջիկն կ'ուղղէ իր քայլերն դէպի ճերմակ մազերն, Աբիմելէք աղան:

Աբիմելէք աղան չընդունիք անուշեղէն նախապատուութիւնը ու՝

Առաջ Գաբրիէլ աղային տուր, կ'ըսէ:

Աղջիկն կը ներկայանայ Գաբրիէլ աղային, որ կը դրկէ գայն Համբարձում աղային:

Աղջիկը կը տնկուի Համբարձում աղային առջեւ, որ նշանացի Գաբրիէլ աղան ցոյց կու տայ անոր:

Աղջիկը կը սկսի ճամբորդութեան, Աբիմելէք աղայէն Գաբրիէլ աղային, Գաբրիէլ աղայէն Համբարձում աղային, Համբարձում աղայէն Աբիմելէք աղային: Ճամբորդութիւնը կը կրկնուի քսան անգամ, խեղճ աղջկան թելերուն վրայ կար եւ կարողութիւն չմնար ափսէն տանելու. այցելուք այս ճամբորդութեան միջոցին յարգանքներ կը փոխանակեն իրարու հետ:

Կ'աղաչեն, առէ՛ք:

Կը խնդրեն, հրամանեցէ՛ք, Գաբրիէլ աղային տո՛ւր, աղջի՛կս:

Չեն ընդունիր, Աբիմելէք աղային տա՛ր, աղջի՛կս:

Ոտքերնիդ պագնեն, մի՛ ընէք, աղջիկը յոգնեցուցիք. Համբարձում աղային հրամանո՛ւր, աղջի՛կս:

Աստուած չընէ, ես ո՞վ եմ, որ ձեզմէ առաջ առնեն. Գաբրիէլ աղային գնա՛, աղջի՛կս:

Չեն առներ, չեն առներ. պարապ տեղը մի՛ գար, աղջի՛կս:

Աբիմելէք աղան առնելու է նախ եւ առաջ:

Մոռցանք ըսելու, թէ այցելուաց մէջ չորրորդ մ՛ալ կայ, որ դասատու է եւ ուսումնական խորհրդէն վկայական ալ ունի:

Կարելի չէ, որ ընդունին, կը վայլէ՞ ինձի, որ ձեզմէ առաջ հրամանուիմ, Համբարձում աղան պէտք է որ...

Իմի՞ն խօսքս կ'ըլլայ. տէր ողորմեա, ճուրճինայի՞ պիտի ելլանք. ամէն բան կարգով, կանոնով ըլլալու է. Աբիմելէք աղային տո՛ւր, աղջի՛կս, Աբիմելէք աղան

այսօր, Աստուած տայ, երեսուն հազար ոսկու տէր է, ես անոր ծառան պիլէ չեմ կրնար ըլլար որ:

Ատ ի՞նչ պարապ խօսք է, Համբարձում աղայ, դուն պատուաւոր մարդ մ'ես...

Ատա՛ն, պատուաւորութիւնը ստակով կ'ըլլայ հիմա, անանկ չէ՞, պատուելի:

Անանկ է, Էֆենտիմ:

Գաբրիէլ աղային տուէ՛ք անանկ է նէ, ան ալ թաղական է:

Յոգնեցուցիք աղջիկս, Էֆենտի՛մ...

Իրաւ է:

Մեղք է գաւալլըն:

Վնաս չունի, վնաս չունի, չյոգնեցայ ես, կը պատասխանէ աղջիկն շունչ կտրած:

Անուշ չպիտի՞ առնէք այսօր, հրամանեցէ՛ք, կ'ըսէ տան տէրը:

Վերջապէս Աբիմելէք աղան կը հաւանի նախապատուութիւնն ընդունիլ եւ

երկար պատմութեամբ մը պարզելէ յետոյ այն պատճառներն, որոց համար կ'ուզէր ամէնէն վերջը ուտել անուշն, կը բարեհաճի դգալ մ'անուշ առնելու եւ ատոր պատշաճի բարեմաղթութիւններն ընելէ յետոյ անուշն ուտելու:

Կարգը Համբարձում աղային է:

Շնորհաւոր նոր տարի, Կիրակո՛ս աղայ:

Շնորհակալ եմ, կը պատասխանէ տան տէրը:

Եւ բարի կաղանդ:

Շնորհակալ եմ:

Եւ աստուածայայտնութիւն Տեառն մերոյ:

Ողջ ըլլաք:

Ուտիք է մեզ ութ օր եւ անձրեւաբեր հողմունք:

Այո՛:

Համբարձում աղան ալ կը կատարէ իւր պաշտօնն, թէեւ կը մոռնայ Գերմանիոյ կայսեր գահակալութեան տարեդարձը յիշելու:

Գաբրիէլ աղան դգալն անուշամանի երկնցնելով կը սկսի բարեմաղթութեանց:

Շնորհաւոր նոր տարի եւ բարի կաղանդ եւ աստուածայայտնութիւն:

Շնորհակալ եմ:

Աստուած շատ տարիներու հասցնէ խնդութեամբ:

Բարեկամօք հանդերձ:

Աստուած քետեր չցցունէ:

Ամէն:

Աստուած քեար պերերեթ տայ:

Ամէն:

Տէր Աստուած Ձեր տունը շէն պահէ:

Ողջ ըլլաք:

Փեսաներ առնէք, հարսներ առնէք:

Շնորհակալ եմ:

Թագերը, պսակները պագնէք:

Շնորհակալ եմ:

Թոռներ ունենաք:

Աստուծով:

Թոռներու թոռներ ունենաք:

Աստուած լսէ:

Թոռներու թոռներուն թոռներն տեսնաս:

Շնորհակալ եմ:

Հիւանդութիւն եւ ցաւ չտեսնաք:

Ամէն:

Խոր ծերութեան հասնիք:

Դուք ալ: Անուշ ըլլայ, Գաբրիէլ աղայ:

Շնորհակալ եմ, Կիրակո՛ս աղայ, հող բոնես, ոսկի դառնայ:

Հրամանեցէ՛ք, պատուե՛լի:

Պատուելին պարզ թեմեննահ մընելով հագի թէ գդալին կը դպչի, ափսէն աղջկան ձեռքէն կ'իյնայ, եւ պատուելիին վրան գլուխը կ'անուշանայ եւ կը ջրանայ:

Հիրերն իրար կ'անցնին:

Վախցա՞ր, օրհորդ:

Մի՛ վախնար, աղջի՛կս:

Գինիի մէջ քիչ մը կրակ մարեցէք եւ թող տուէք, որ խմէ:

Խեղճ աղջիկ:

Մենք պատճառ եղանք:

Թեւէն արիւն առէ՛ք:

Թաքլաք մը նետել տուէ՛ք:

Ժեռոտելի բաստիլներն տուէ՛ք:

Մինկերի կարի մեքենայ մը շունի՞ք:

Վախցա՞ք, օրիորդ:

Չէ, չէ, չվախցայ, բայց կը ցաւիմ, որ...

Ցաւելու բան չկայ, օրիո՛րդ, ասանկ օրեր շատ կը պատահին, ասանկ փորձանքներ:

Գնա՛, հանգստացի՛ր, օրիո՛րդ:

Աղջիկն դուրս կ'ելնէ: Դիւրին է գուշակել, թէ ինչ կ'ըսէ մտքէն:

Պատուելի՛, մահանայով տուշ ըրիր հէ՞...

Քիչ մը թրջեցաւ վրան:

Ժեռոտելի բաստիլէն քսեցէք վրան:

Կը չորնայ, կը չորնայ: Մնաք բարով, պատուելի:

Երթաք բարով, էֆենտի՛ն:

Մնաք բարով, պատուելի՛:

Երթաք բարով, պեյրս:

Կեցիք բարով, պատուելի՛:

Երթաք բարով, Էֆենտի՛ս:

Ա՛հ, սա քաղաքավարութեան ձեռքէն մեր քաշածը... մանասանդ
դասատուներուն քաշածը:

Բայց սա ալ բան մը չէ, աւելի սարսափելիները կան:

Մտիկ ըրէ՛ք:

Վաճառական մ՛ես: Եւ ես չեմ մեղադրեր զքեզ վաճառական ըլլալուդ համար,
որովհետեւ մեղաւորը դու չես, այլ այն, որ զքեզ վաճառականութեան
ատաշնորդեց: Չեմ ալ նախատեր զքեզ, այլ, թող ներուի ինձ անաչառաբար
խօսիլ, կը վարուիմ հետդ այնպէս, որպէս պիտի վարուէի քսակահատի մը հետ,
այսինքն քեզի հետ գործ ունեցած ժամանակս կը զգուշանամ, որ չխաբուիմ, ոչ
թէ խրատուելով Վովնարկի սա խօսքէն, թէ «վաճառականութիւնը խաբէութեան
արհեստն է», այլ յենլով անձնական փորձառութեանս, որ յանդգնութիւն կու տայ
ինձ բարձրաբարբառ խոստովանիլ այսօր, թէ հարիւր վաճառականներու մէջ
երկու վաճառական ճանչցած եմ միայն, որ սուտ չեն խօսիր... բայց արի, տես, որ
այս երկու վաճառականներն ալ բնաւ չեն խօսիր:

Վաճառական մ՛ես, ըսինք, եւ ամչնալու պատճառ մը չունիս: Առաւօտուն կանուխ
վաճառատունդ կ'երթաս, որոգայթներդ կը լարես եւ ամէն բան կը նիւթես,
որպէսզի չփախցնես որսն, որուն կը սպասես ժամէ ժամ: Մեծ վաճառական մ՛ես,
աւելորդ է ըսել, թէ մեծ խաբեբայ մ՛ես. ուստի վաճառատանդ մէկ անկիւնը
քաշուած՝ աշերդ կը սեւեռես վաճառատանդ դռան, ուսկից պիտի գայ որսն:
Քանի մի ժամեր կու գան, կը հոլ ովին, կը սահին, կ'անցնին, կ'երթան, եւ ահա
յաճախորդ մը կ'երեւայ դռան առջեւ: Անմիջապէս ոտքի կ'ելնես, կը վազես
դիմաւորելու յաճախորդդ եւ բազմոցիդ վրայ բազմեցնելու: Խահուէ կը հրամցնես
իրեն, կը շողորորթես, կը շոյես զինքն, կը քծնիս իրեն, չափազանց յարգանքներով

կը շրջապատես զինքն եւ մէկ ժամ շարունակ սուտ կը խօսիս: Գրագիրդ ալ ուրիշ սուտերով հաստատութիւն կու տայ սուտերով:

Յաճախորդդ քիչ մը պարարտ է, երեք-չորս հազար ոսկոյ գնում մը պիտի ընէ: Այլ եւ այլ ապրանագ օրինակներ կ'ուզէ, ցոյց կու տաս՝ գովեստներ կարդալով անոնց վրայ, միայն թէ դափնեայ պսակներ չես բոլորեր ապրանագդ ճակտին վրայ:

Այս ապրանքը հրապարակի վրայ չգտնուիր, մասնատրապէս մեզի համար ապսպրած ենք:

Շատ ընտիր ապրանք է, կը յարէ գրագիրդ, որուն հետ փոխասաց կ'ըլլաս:

Սքանչելի ապրանք մէ, նմանը չկայ:

Ո՛ր էր, թէ քանի մը հազար հակ ունենայինք այս ապրանքէն:

Ապրանք մը, որու գոյնը չշրջիր:

Ապրանք մը, որ հազար անգամ իսկ եթէ լուացուի, չփոխեր իր գաղափարը:

Սկզբունքի տէր ապրանք մը:

Եւ հաստատ սկզբունքի տէր, որովհետեւ բնաւ չպատռիր:

Հարիր տարի կրնայ գործածուիլ:

Ի՞նչ կ'ըսէք, տէր իմ... հարիր տարի՛... հարիր յիսուն տարի, երկու հարիր տարի, երեք հարիր տարի...

Ծիծաղ. Շիրիմ մը կանգնեցէք սա ապրանքին վրայ, ո՛վ հարուստներ...

Շատ պատուական ապրանք է:

Եւ ամէն մարդու ալ չենք ցուցներ սա ապրանքը:

Զձեզ մեր վաճառատան վարժեցնելու նպատակով է, որ հանեցինք այս ապրանքը:

Ներեցէք մեզի՝ ձեզի աղաչելու, որ չըսէք ուրիշին, թէ այս ապրանքը մեր վաճառատունէն առիք:

Ասոր նման հազար ու մէկ խօսքերով վերջապէս կը յաջողիք դու եւ գրագիրդ հանեցնել ապրանքներդ: Կարգը կու գայ սակարկութեան:

Վերջնական գին մը պիտի գրուցեմ:

Մեր էֆենտին սովորութիւնն է՝ միշտ վերջնական գին մը գրուցել:

Սակարկութենէ չեմ ախորժիր:

Մեր էֆենտին բնաւ չախորժիր սակարկութենէ:

Թերեւս աղէկ բան մ'ըլլայ սակարկութիւնը, բայց իմ նաթուրայիս հակառակ է: Շատ խօսք չեմ սիրեր:

Մեր էֆենտին շատ խօսիլ չսիրեր:

Ուստի, մէկ խօսքով, այս ապրանագ համար պիտի վճարէք երեք հազար ութ հարիւր մէկ քառորդ ոսկի եւ երկու դահեկան:

Միսալեցաք, էֆենտի, սիսալեցաք, չորս հազար ոսկիի մեզի ապրանք եղած են անոնք:

Ի՞նչ կ'ըսես:

Միսալ հաշիւ ըրիք, էֆենտիս, սիսալ, կեցիք, ցոյց տամ այդ ապրանագ հաշիւներն, գորս Եւրոպայէն մեր գործատանէն ընդունած ենք:

Գրագիրն շինծու հաշուեցոյցեր կը բերէ եւ կը նետէ առջեւդ: Դուն ալ որպէս թէ կը քննես եւ կը խոստովանիս սիսալած ըլլալդ:

Մխալ հաշիւ եմ ըրեր:

Չորս հազար հարիւր մէկ քառորդ ոսկի պիտի ըսէիք:

Ինչ որ է, անգամ մը բերնէս ելաւ, խօսքս ետ չեմ առնելու ես:

Գրագիրը բարկանալ կը կեղծէ եւ իւր գրասեղանին առջեւ կ'երթայ՝ քթին տակէն մըմտալու:

Երեք հարիւր ոսկի վնասի՛լ՝ խօսքն ետ չառնելու համար:

Այո՛, բերնէս ելաւ, կը վճարէք այդ գումարն եւ կ'առնէք ապրանքները:

Մեզի պէս ապուշներն ամէն օր կը խաբեն ասանկ. եթէ ես այս վաճառատան մէջ գրագիր չըլլայի, միշտ հոս պիտի գայի ապրանք գնելու, կը մըմտայ գրագիրը:

Էֆենտի, կը պատասխանէ յաճախորդը, ես ալ վերջնական գին մը պիտի տամ այն ապրանագ համար. երեք հազար եօթը հարիւր քսան ոսկի պիտի վճարեմ:

Որսը բռնուեցաւ: Հինգ հարիւր ոսկի կը շահիս. կ'ուրախանաս յաղթանակիդ վրայ, բայց անմիջական հաւանութեան մը գայթակղութիւն պատճառելու հաւանականութիւնը մէկ կողմէ եւ քանի մ'ոսկի աւելի փրցնելու անգթութիւնը միւս կողմէն կը հարկադրեն զքեզ զարմացական եղանակով մը պատասխանել յաճախորդիդ.

Տղա՛յ ես, աղբար, ապրանքը չճանչցար...

Այդ ապրանքն ամէն մարդու հանելու չէ, կը մըմտայ գրագիրն:

Ներեցէ՛ք, մարդ խաբելու համար նստած չենք հոս:

Քսան ոսկի ես տամ, կ'ըսէ յաճախորդը:

Քսան ոսկիի խօսքը կ'ըլլա՞յ... կ'ուզէք նէ, տարէք ապրանքներն եւ բարայ մը մի՛ վճարէք. բայց խնդիրն անոր վրայ չէ, ապրանքին արժէքը տալու էք:

Տասն ոսկի աւելի տամ:

Հասած է ժամն համաձայնութիւն գոյացնելու եւ ոսկիներն առնելու. հետեւապէս կը սկսիս կարճ, բայց ազդու ատենաբանութիւն մը, որով կ'ընդունիս ինչ-ինչ զիջումներ ընելու, եւ ահա ճիշտ այս միջոցին կարճ, բայց ազդու մարդ մը կը մտնէ վաճառատունդ:

Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց:

Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի:

Ի՞նչպէս էք, աղէ՞կ էք:

Փառք Աստուծոյ, Ենովք աղայ:

Տիկինը ի՞նչպէս է:

Աղէկ է:

Օրիորդներն աղէ՞կ են:

Աղէկ են:

Ողջ ըլլան. տղադ ի՞նչպէս է:

Շատ աղէկ է:

Մա՞յրդ:

Գէշ չէ:

Մեծ մա՞յրդ:

Հանգիստ է:

Փեսան ի՞նչ կ'ընէ:

Ի՛նչ ընէ:

Ձեզի՞ է:

Չէ:

Դուք փեսիսն տո՞ւնն էք:

Չէ:

Ո՞ր էք հապա:

Մեր տունը:

Շատ աղէկ, շատ աղէկ... Խահուէ մը ապսպրել տայիր ինձի, որովհետեւ յոգնած եմ:

Շատ աղէկ:

Չե՞ս ըսեր, մեր պզտիկ շունը ետրուլամիշ ըրաւ երէկ գիշեր:

Կ՛րնէ եա՛:

Մէկ հատը ձեզի պիտի տանք:

Շնորհակալ եմ:

Բայց քիչ մը մեծնան տէ, անանկ:

Շատ լաւ:

Յաճախորդն մեկնելու շարժումներ կ'ընէ. նշանացի կը պատասխանես իրեն, որ քիչ մը համբերէ: Կը բարկանաս, բայց քաղաքավարութիւնը չներեր, որ Ենովք աղան վոնտես:

Ի՛նչ ալ աղուորիկ լակոտներ են:

Այո՛:

Սա պիտի հարցնէի ձեզի, թէ ի՞նչպէս մեծցնելու է ասոնք: Մայրերին տկար ու հիւանդոտ է, կաթ չունի... տունէն ըսին, որ պիպրոտն առնենք ու անով կաթ տանք:

Այո:

Կ'ըլլա՞յ մի:

Չիյտնմ:

Ձեր թաղը սանկ շուն մը չկա՞յ, որ գայ, մեզի մնայ ու սա լակոտները պէսլեմիշ ընէ: Քուզում, կ'աղաչեմ, աշխատինք ու ազատենք սա խեղճերը... պիպրոտնի խելքս չպառկիր իմին: Ասդին, անդին հարցնէիք ու փնտռէիք ասանկ շուն մը...

Շատ լաւ, կը նայինք:

Հիմա նայէիք:

Հիմա գործ ունիմ, անկարելի է:

Աս ալ գործ է, սեպապ է:

Գլուխս քերելու ատեն չունիմ այսօր:

Ե՞րբ կը նայիք:

Ստիպողական գործեր ունիմ, երբ նայելիքս անգամ որոշելու ժամանակ չունիմ:

Ժամանակ անցունելու չի գար, անանկ բան մ'է, որ...

Գործ ունիմ, Ենո՛վք աղայ:

Անանկ բան մ'է, որ ուշացնելու չգար... մէկ հատը քեզի պիտի ըլլայ:

Քառորդէ մը կու գամ, կ'ըսէ յաճախորդն ու վաճառատունէն դուրս կ'ելնէ:

Է՛նֆ, Է՛նֆ, Է՛նֆ, կը հառաչես ինքիրմէդ:

Լակոտներն անանկ ալ սատանայ են, որ տեսնելու բան է:

Այո՛:

Ուրեմն գարար տանք ու լմնցնենք:

Այո՛:

Պիպըռոն չըլլար:

Չըլլար:

Ստնտու շուն մը գտնելու է:

Այո՛:

Ուրիշ ճար չկայ:

Չկայ:

Կա՞յ մի եա՛:

Չկայ:

Չէ, թէ որ կայ նէ, ըսէ՛:

Չկայ, Ենովք աղայ, չկայ, չկայ, չկայ:

Բարկացա՞ք:

Չբարկացայ, բայց...

Բարկանալու իրաւունք չունիք, ես ձեր սպասաւորը չեմ, ձեզմէ շահ մ'ալ չեմ ակնկալեր, խահուէ մը խմեցի, կ'ուզէք նէ, անոր ալ բարան կու տամ, հոշ կելտին, սեֆա կելտին:

Չէ...

Գիտնալով, որ շուներէն կ'ախորժիս, ուզեցի քեզի շուն մը հետիւէ ընել, դուն շնորհակալ ըլլալու տեղ օտապաշըի թաւրը կը բռնես ինձի:

Չէ, Ենովք աղայ:

Հէր քուշուն էթի ենմեզ, աս ալ սորվէ, չես գիտեր նէ:

Ենովք աղան բարկութեամբ կը մեկնի:

Դուն ալ յաճախորդիդ դարձին կը սպասես:

Երեք ժամէն ետքը յաճախորդդ կու գայ:

Այսօր ստակ չունիմ, քանի մ'օրէն պիտի գամ ապրանքներն առնելու: Մնաք բարով:

Եկուր, ո՞ր կ'երթար... խօսք մ'ունիմ... վայրկեան մը... ինձի նայէ'... աղայ...
Էֆենտի... բարեկամ... չգա՞ս... եկուր տէ, դարձեալ գնայ... չենք ուտեր քեզի...

Խե՞նթ է, որ ետ դառնայ:

Կը զգաս դժբախտաբար, թէ յաճախորդդ ուրիշ վաճառականի մը հետ համաձայնած է աւելի գոհացուցիչ պայմաններով: Քիչ մը գրագրիդ դէմ կը բարկանաս եւ յետոյ կը սկսիս հայիոյութիւններով փաթտել Ենովք աղայի գլուխը:

Դառնանք այժմ ուրիշ տեսարանի մը: